ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909. Շաբաթ, Յուլիսի 25-ին. Թիֆլիս. №30

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ



Մահմէդ-Ալի շահին գահնկեցանողները նոր շահ Ահմէդին հանդիսաւոր տարան պալատ և երկրպագեցին ոտները համբուրելով. (լրագրներից)

Худож.-Лит. С. Быхова, Тифлис.

Վաւերացրած Բ-ռոն.



Փառք Աստծու. որ գոնէ բնութիւնն է էլի մեզ խըղճում, և էլի նա է մեզ հաց տալիս, մեր աշխատանքը գնահատում։

## ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ



Ամբողջ ծանրութիւնը, տան հոգսն ու կարիքը միայն մէկն է քաշում, ընտանիքի հայրը կամ մեծը, իսկ անդամները դեռ բաւական չէ, որ չեն էլ օգնում տանջուող հօրը, նոյն իսկ աշխատում են էլ տունը քանդելու։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Օրգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Դուրսը և Արտասահման 5 ր. կէս տարւանը » » 3 ր.

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Պուշկինսկայա փ. № 1

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԽՐԻՄԵԱՆ

Յունվարի 1-ից մինչև տարւայ վերջը «Թաթարալան» արժէ 3 ռուբլի, իսկ նաղդ՝ 2 ր. 50 կ.

---

## ՊՕԼԻՏԻԿՈՒՐԻ ԳՈՒՐՋԵՐԵՄԷ՛Ս

### ԿՕՆՑԻՏՈՒՑԻԷՆ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ ԽԱԼԽԻՆ ԺԱՐԿՈՑ ԻՆ ՇԻՆՈՒՄ

Դեպեշնիրեմէն իմացայ, վուր մի-թում Իսպանիի թագաւուրը հրամանք է արի կօնցիտուցիէն յիդ վիկալնիլ ու խալխին անկօնցիտուցիա թողնիլ։

Աղամբ, իս հենց գիդէի թէ Ըսպա-հանի համա է խուսկը, արմցայ, օղոր-մած հոքի. մեղայ Աստու, բեմուրազ Մամէդ-Ալի շահեմէն հալբաթաս սով-րիլ է սաի, իժում էլի կասաս, սաի. իժում էլ ով գիդայ ինչիր կուլի, սաի. ինձ ու ինձ շատ բանիր սաի, դուք ձիզ ու ձիզ քիչ բան իք սաում. իս էլ էննց. համա վիրչը իմացայ, վուր էս Իսպանիէն, Ըսպահան կի չէ էլի, Իսպանիէն էլիլ է Եւրոպում, Ֆրան-ցուզանու կուխկին, Ինգլիսաանու ճամ-փին։

Էս վուր իմացայ, սաի, հալբաթաս, սաի, շատիր ին մօգմնում սաի. չուն-քի Եվրոպում, հիմի, էրկու փութանի հանել չի ըլի՝ վուր անկօնցիտուցիա ապրի, ու բաս մէ թագաւուր սաի էս վունց կանի։

Հախ Աստու, իս խօ իս իմ, իս էլ իմ հանում կօնցիտուցիէն։

Մա՞չ։

Տօ, էսափ դաղումից ունել ինչ կայ։

Խուսկի գէլիշ, մէ տանը ապրում ին պապը, տատը, ժամիդէքը, դէդի-դէքը, ձիէքը, բիձէքը, քեռիքը, բիրարի-քը, ախպրտիքը, հարսնիքը, թուռնիքը, ծառիքը, մէ խուսկով, մէ եարսուն-քառ-սուն հոքի, էսափ վուր մէկը մինձ ըլի, էն մէկէլնիրն էլ մինձին օրնող, էսափ փիս բան ինչ կայ,

Դաղումը աշկարայ է։

Էլի, խուսկի գէլիշ՝

Իս էն լաւ է, վուր մէ տանը իրիք չուրս հոքի ին ըլում ու ամենքն էլ ծուռ ու մուռ ճամփի վրէն ին մնդ-գալի, ան էն վուր՝ մէ տանը քսան հոքի ին ըլում ու մէկը աշխատում է, էն մէկէլնիրը կի վունչինչ չին շինում, ան էն վուր՝ մէ տանը քառասուն հոքի ին ըլում, ամենքը բանում, գուրձում ին, օրն ու գիշիրը դաղում ին ու բերում տուն՝ մէկը, ան էրկուսը խըժ-րում ին անհեսաբ. չէ էննց լաւ չէ, իմ ջեհէլ վուխտը, հէյ գիդի հա՜ ժա-մանակ, ալիբուխարի փափախը, դա-նաուզի ախալուխը—դամուշի թերե-քով. մախմուրէ շալվարը, գիդին ծո-դէքը. անտիկմորից էլ լաւ կարէն ան քուլաջէն, վուր չէի հարնում, ու հա-մին ադաք կադնում, մէշը մաքի տա-լի, հենց գիդէի թէ վէլիկի կնիազ իմ. լաղաթ ունէր է, լաղաթ. ծառի կաթ վուր ուզէի, կու ճարէի մէր պետ-լած քաղկումը. հալալութինը, բարեգ-մութինը, ախպերութինը խօ փթերով ջուալներով ու սէլերով կէր. ապրիլը խաղուհի էր, օչով չէր ուզում մեռնի. բաս չէ ու հիմիկուայ խալխի հանգը՛ կուլէինք, հիմի ով սախս էն է փիքր անում, եարար իփ կու մեռնիմ, կօռէ, ան թէ չէ փիքր անում, վիր է կալ-նում գարիչխանէն ու մէ քիչ կով է տալի թէ չէ, վուռնիրը հեսափ է ձքում կօսխս սատած աքլոր ըլի։

Ինչ էի սաում, հա, միտս բերի—վաղուայ բանիրը, իմ ջէհէլութենի ժուգը, դուրթ է կօնցիտուցիա չկէր, համա կօնցիտուցիի տօլ հաւատարմութին, ադալութին, խաթր ու լողութին ու-նէինք իրարու։

Մէկը թէ մէ բան գուզէր շինի, մինչկի օջախումը գիփունանց չը հարցնէր, բոլուրի ամաձայնութինը չը-լէր. չէր ըլի։

Կօնցիտուցի զակօնով էսենց է, վուր մէ երգրում, ինչ թաւուր բան ըլի, խալխի ջոգած մարթիք պիտին փիքր անին, փիքր անին, մինչկի մէ լաւ բան մոգոնին. սրանք պիտին գնա թղփի թաւուր մէ տիղ նստին, մինչկի էն չափ. մինչկի ձեռնեռեմէն ճուտիր դուս գուքան, իժում ճուտիրը դառ-նում ին վառկնիր, իժում էլ հաւիր ու աքլորնիր։

Էս սահաթիս կի ճուտիրն էլ թօնդ ին ու վառիկնիրն էլ ու շուքն էլ խիստ է գօռում, վուր կինազամ սիրտս գը-նում է, ու միր պօլիցէն կի ձէն չէ հանում, դուբերնատուրն էլ էս շու-քին մէ լաւ չէ պատժում. արա էս վունց կուլի։

Ինչ էի սաում, հա, Իսպանիի կօն-ցիտուցիէն յիդ է խլի թագաւուրը, խիստ եանղիշ է էկի. ինչի է էսենց բան արի. ամութ իրեն. հիմի խալխն էլ ցօցիալնեռու հիդ մէ բերան է արի ու մէ ինչ վուր քախկում Բարցիլոն թէ Սիրբերում կօսին, վրա է նըսդի ժամերու ու կուսերու, վարթապետ-ներու ու պատրներու վրէն ու վան-քիրը էրիլ ին մարթկերանցով հէգը. էս շուքին պատճառը, արա էս ինչ յի-մարութին է, մարթս՝ ամառը չայ չի կանում խմի, տաք տաք ծեննով բան չէ կանացի ուտի, խորոմածը ինչ է, խորոմածը բաղրիջնով չիս կանում խորի. չունքի կրակի առաջ չիս դիմ-նում,. էնդի կի կօնցիտուցիի խաթրու մարթիք ին էրում, ժարկոյ շինում։

Սախնը խալխն էլ օխչրի հանգը մէ բան է, ինչ թաւուր դուդիս, էնենց էլ սարքէ կօնիս. համա, էլի ինչ վուր չիի, խալխին էլ պիտի լսէր Իսպանիու

թարաւուրը, խալխը չի ուզում կուի. Թարաւուրը ասում է, գուզիմ կուի, կոսէ, փիէ. տօ, շատ ջէր մարթս խալի հարմնիք գնալ էլ չէ ուզում, ու կուիլը սպանիլը ան սպանուիլը վուր չուզենայ, ինչ հաջաթ, ուփրօ լաւ չէ՞ վուր օչով ընդամաղ չլի, մարթիք չը սպանուին ու այլն ու այլն վուենց վուր ասում ին միր ուսումնականնիրը գրափիան։

Ա՛յ ին ինչի իմ արմնում Իսպանախնու Թարաւուր Ալֆօնսի վրէն։

Էրեւումէ սա ունեցիլ է վերի աստժումը դարդակ օթախնիր, թէ չէ էտ բան չէր անի, բա Օսմանլի սուլթանի ու Ղզըլբաշի շահի տօլ էլա խիլք վո՞ւնց չունեցաւ էտ տնաքանդը։

Հայրաթտա չէ ունեցիլ։

Գիդիք, մարթս թէկի վերի էտաժը քրինով է տալի, փիս բան է անում, էրեւում է վուր քամիքը շուռ ին տալի. ետրաք դրանց շուքն էլ զօռ չի կանայ անի, չունքի դարդակ վուխտը գիդիք. վուր քամիքը սկսադնօյ կօնին։

Ա՛յ հիմի միր ճանանչներու, միր բարեգմերու—տօ հեռու ինչի ինք գընում, հենց միզ ինքներուս անդրինք. ձվ ուփրօ դարդակ վերի էտաժ ունի, նա ուփրօ արխէին չէ։

Միր խմբագիր Էրիցոփն էլ էտենց է, արխէին։

Էս ինչնմէն է։

Պոլիտիկուրի գուրձիրնմէն։

Համա իս էլի էն իմ ասում, վուր թէկի մարթս ինքը վունչինչ չէ, գուր է ասկ ու տակի խօտօրինէն. հիմի էտ Ալփօնսի բանն է. տօ, դուն վուր խըլում իս, ինչ իս տալի, ան ձվ իս է վուր խլում իս ինչի իս տուտուցուլթիննիր անում. Շահի ու Սուլթանի տուրաթնիրը տօլիտ վրէն չիս դնում, Աբդուլ-Համիդին ինչի իք մտահան անում։

Վա՜յ մէ, վա՜յ մէ։

Իս վուր, Աստուծ չանէր, էտ իսպաններին թէ իսպանախներին թարաւուր ըլէի, ուրիշ թաւուր ժաժ գուքայի, Թաւուրավին հիգս կու տանէի, մէ ճառ ասիլ կուտայի, խալխն էլ կու ստար ու կու հանէր էլ, չունքի Ալէքսանդրէն, իմ վուրթկերանց արիւր գիդենայ, լաւ է խօսում. խօսալիս էլ հետո է վրայ տալի, կօսիս կարկուտ ըլի։ Ապա էտ թաւուր մինիստր վուր ունենար Ալֆօնսը ինչ ուզէր, էն կօնէր, ու չէր միկենայ, էս շուքին կօնգիտուցիէն չէր խլի խալխիցը, խալխըն էլ գուր տիղը էնդդամ պատէր ու վարթապիտ, մանաշկա ու կուսիր չէր կտորի, չէր խորվի ու էն էլ էս շուքին։

Համա իս էլի էն իմ արմնում, թարաւուրը վուր կօնգիտուցիա խլի խալխիցը, էս հոքեւուրնիրը ինչ դաւի ունին է, ինչ վուր իրենց բանը չէ ինչի ին խառնւում, վուր վիրջն էլ էտենց տուտուց բանիր է ըլում։

Գասպար Կալպասուզեանց

### ՍԵՒ ՄՈՒԹ ԳԻՇԵՐ ԷՐ

Սեւ մութ գիշեր էր. Մ'խուլթեան գրկում
Մ'տորում էի, տառապում լռիկ.
Եւ յիշո՛ւմ էի, յիշում ու երգում,
Երազ օրերը անոյշ եւ քաղցրիկ։

Փշո՛ւր, խորտակւած, դառնութեամբ լցւած.
Ո՜հ, իմ խեղճ սիրտը այնպէ՛ս լալիս էր...
Ա՜խ... նա լալիս էր օրերը ջամռած,
Ծաղիկ ու համբոյր եւ արցո՛ւնք եւ սէ՛ր։

Միր-Ջէնկ

### «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ

Քալանթար.—Համբարձում, դու Պարսկաստանի հետ լաւ ծանօթ ես, առաջ տեսնենք, ո՞վ կարելի է խնամակալ նշանակել երեխայ շահի վերայ։

Հ. Առաքելեան.—Դէ ես այսօրւայ առաջնորդողի մէջ գրել եմ, կարդա իմացիր էլի՜։

Քալանթար.—(Մշակի № 153-ի առաջնորդողը կարդալուց յետոյ) Համբարձում, գրել ես, որ ամենալաւ խնամակալ կարող է լինել Մելքում խանը. բայց կարծեմ այդ Մելքում խանը կենդանի չէ, մեռած է.

Հ. Առաքելեան.—Սխալ ես, Ալեքսանդր Հայրապետիչ, Մելքում խանը կարծեմ կենդանի է։

Քալանթար.—Տնաշէն, ինչպէս թէ կենդանի է, դու ինքդ այստեղ գրել ես, որ երկու տարի է Մելքում խանը մեռել է։

Հ. Առաք.—Հա՛, ուրեմն խեղճը մեռել է, ափսոս։

Քալանթար.—Դէ որ մեռել է, էլ ինչպէս կարող է խնամակալ լինել, որ առաջնորդողի մէջ էլ գրում ես։

Հ. Առաք.—Ջահաննամը թէ մեռել է. առաջին որ՝ մեռած լինելը չի խանգարում խնամակալութեան. երկրորդն էլ որ՝ ես առաջնորդող չպիտի՞ գրեմ, ինչ է։

Ճանճա

### ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Կուլտուրական տեսակէտից Կովկասա երկրորդ տեղը բռնողը Գանձակի հայերն են, որ Կովկասի եւրոպացիների հռչակ են վայելում։ Նկատի ունենալով որ քաղաքային ձայնաւորների մեծ մասը, նախկին տարիներում հայեր են եղել, և նրանց «եռանդուն ջանքերի» շնորհիւ է, որ քաղաքս մասի մտաւոր, բարոյական, կուլտուրական, նիւթական, ֆիզիքական, սանիտարական, շինարարական և այլ զանազան պայմանները, ի վնաս մեր դրացի թուրքերի, հասել են այնպիսի կատարելութեան, որ եանկիների նախանձը կարող է շարժել։ Ուստի բոլոր համարեցին՝ սոցիալական այդ խոշոր անտարբերութիւնը վերացնելու համար, դիմել կոմիտէիս, որ հայերին, առժամանակ կանգնեցնել տանք, կատարելութիւն տանող ճանապարհի կիսին, մինչև մեր դրացիների մեզ հասնելը։

Այդ պատճառով անցեալ «Խաթաբալ.» կոմիտէն՝ առաջիկայ քառամեակի համար նոր ձայնաւոր ընտրելու ժամանակ՝ որոշեց. հրաժարել նախկին համձարեղ հայ իրաւատէրերին որ «ձայնադուրկ» լինելու համար մոռանան... ժամանակին քաղ. հարկը վճարելու և, այդպիսով վրէժխնդիր լինեն հասարակութիւնից. որը, իրենց քաղ. օգտին... արածները անմահացնելու համար, խոստացած արձանը չէ կանգնեցրել Շիրիջարադարի թումբի գլխին։

2, Այն վաճառականներին որոնք «Գիլդիական ցենզով իրաւունք ունեն ձայնաւոր ընտրելու և ընտրուելու, անմիջապէս իրենց խանութները և ունեցածները կնոջ կամ բարեկամների անունով անեն, ու «Գիլդիազուրկ». դառնան՝ որ անակնկալ մեռնելուց յետոյ, առանց կտակի չը մնան և անմեղ... սնանկանալուց ազատուեն։

3, Տակի մնացած թեկնածուներն էլ, եփրական ոտը չը լինելիս, փայտէ ոտով էլ կարելի է եօլա գնալ» ասածի համաձայն, 17,000... ընտրողներից... միաձայն... գաղտնի քւէներ տանելով, ձայնաւորներ ընտրեն, որ նրանցից շատերը, դումայի նիստերում, կամ Զաքարիա քահանայապետի օրը ընկնեն, կամ թէ բառ փիլիսոփայի «Եթէ հարկաւոր է խօսել՝ լինեն վերջինը, իսկ եթէ լռել, լինեն առաջինը»

Իբրև հետևանք՝ ներկայումս մեր դրացիները իրենց մտաւոր ծարաւը յագեցնելու համար ունեն, մի քանի գրադ-ընթերց. (որը Աստուած իրենց հալալ անի) իսկ հայերը իրենց մտաւորը՝ վաղուց լցրած լինելու պատճառով, (լիքը լինելուց՝ բիչ է մնում որ գլխներից թափի) գրադ-ընթերց. տեղ անուանց են տանում «Кружокъ-ում», թղթախաղի մասին խօսած դասախօսութիւններից։ Նրանք ունեին մի քանի տարրական դպրոցներ, իսկ հայերի ծխական դպրոցի հոգաբարձ. և աւագ ուսուցիչը առայժմ «խըտըրտակօխով» են զբաղուած։

Բացի այդ՝ քաղաքագլուխ Անկար Աղէն

որը 4 տարուայ ընթացքում չէ կարողացել ոչ մի անգամ այցելել քաղաքի երկրորդ մասը՝ ոտները ռեւմատիզմով հիւանդ լինելու պատճառով՝ հրամայում ենք նորից վերցնել քաղաքագլուխ, իսկ ոտները առողջացնելու համար, աճիկը ուեխլացնել, որ առողջանալուն՝ պէս, շնորհ... անի քաղաքը պաքսերելու։

Իսկ մինչ նրա առողջանալը, կոմիտէս քաղաքի համար ժամանակաւոր գլխաւորներ է նշանակում 1-ին մասում արխիտէկտոր Поляковъ-Шляковъ-ին իսկ երկրորդ մասում սանիտարական հսկիչ բիթը ծուռ Շէ-նոֆ բէգին։

Արխիտէկտոր Шляковъ-ին հրամայում ենք, որ քաղաքի անձառնի և տգեղ հին «Планъ»-ը փոխի ու արխիտէկտորական գիտութեան համաձայն, նոր «Планъ» կազմի. Նրա համար լիազօրում ենք՝ փողոցները և տները ուղղացնելու ժամանակ, հարկաւոր դէպքում, քաղաքապատական գետիններից. «Ջհուր» անի—տայ տնատէրերին և ընդհակառակը։ Այդ ամենը անելուց առաջ տանեայ իր «վարձը», որի քանակութիւնը որոշել թողնում ենք իրեն։

Շէնոֆ Բէգին հրամայում ենք, որ ի նկատի ունենայ քաղ. կեղտոտութիւնները մաքրող մշակների առողջապահութիւնը՝ նրանց, փոխանակ փողոցների կեղտոտ օդում բանեցնելու՝ իր այգին մշակելու համար բանեցնի մաքուր օդում, տանելով մշակներից դրա համար իբր վարձ՝ նրանց 15-ական ր. ռոճիկներից 3-4-5-ականները, նայեած օրուայ կուրսին։ Իսկ քաղաքին հարկ վճարող չորս տանիներին (ծի զամէչ և այլն) տեօրխայով թղթի վրայ ի չիք դարձնել։

Այս ամենը 24 ժամուայ ընթացքում իկատար ածելու համար՝ հրամայում ենք քաղ. վարչ. նորընտիր անդամներ պ. պ. Մելիքեանին և Իրզայանին ի տեղեկութիւն։

Իսկականի վրայ ստորագրած է

Մոծակ

---

## ԳԱՐՈՆ ԱՋՈՒՑ

—Գ. Ազուֆ. դէպի ձուր։

—Մշակի խմբագրատուն. Քալանթարի հետ գործ ունիմ։

—Դուք և Մշակ-դուք և Քալանթար այդ ինչպէս փոխեցիք ձեր հայեացքները. չէ՞ որ երեք ամիս առաջ նրան հայհոյում էիք։

—Այն ժամանակ ուրիշ էր։ Նա ուրիշի օտէի աշխատում. հիմայ ինձ նրանք փըշ-տանելներ են տալիս. ես էլ նրանց տան առաջ եմ հաչում։

---

## Ա. ԺԵՄՉՈՒԺՆԻԿՈՎԻՑ

Մեզ նեղում է խոնջութիւնը,
Բազմահող է մեր ուղին.
Որտեղից որ մենք անցել ենք—
Բռնավար և տանջագին՝
Այնտեղ արեան ծով է կանգնած,
Գէտ է հոսում արցունքի...
Մեր վիճակի վերան գթա,
Ո՜վ Թագաւոր երկնքի։

Ո՞ւր ենք գնում այս թանձրամած
Գիշերուայ խոր խաւարում.
Եւ ո՞րտեղ է չարչարանաց
Գոռ սահմանը վերջանում։
Շուտո՞վ արդեօք կը հասնի օր,
Կը բացուի լոյս—կենսաբեր,
Որին, ո՛վ Տէր, արևելքից
Սպասում ենք—անհամբեր...

Թէպէտ կեանքը շատ է քամել
Մեզնից ոյժ և զօրութիւն,
Բայց մեր ոյժը հէնց հիմա էլ
Անսահման է և անհուն։
Թէպէտ շատ ենք կրել տանջանք,
Վիշտ ու չարիք մեր կեանքում,
Բայց մեր յոյսը դեռ չենք հատել
Սիրում ենք և հաւատում։

Ուղարկիր Քո օրհնութիւնը
Եւ մի թողիր մեզ, ո՛վ Տէր,
Երբ կենսամաշ ձախորդութեան
Մեզ հալածեն սև օրեր։
Տո՛ւր հասկանալ, որ լսում ես
Հառաչանքը այս երկրի,
Որ դիտում ես, ո՛վ Գաղտնատես,
Տառապանքը ազգերի...

Լիլիպուտի

---

## ՊՕԼԵՄԻԿԱ

Գասպար Աղա Կալանթարեանը մի անգամ ասել է, «պօլեմիկան փաթերականաւոր բան է»։ Թէպէտ ճշմարտութեան մի մեծ զօղա պարունակում է այդ երեք հատորակ խօսքի մէջ, բայց առանց պոլիմեկային էլ կեանքը, մանաւանդ լրագրական, բոլորովին ճանում է։

Ընթերցողներն երբեմն ուղղակի ձանձրանում են, կամ աւելի ճիշտ յոգնում են, ամենաթարմ քաղաքական լուրեր կարդալուց։ Օրինակ Կրէտէի խնդիրը, կամ Մարոքքոյի հարցը և կամ Պարսկաստանի վերջին շարժումները։ Այնքան գրեցին այդ հարցերի մասին և համարեա միշտ նոյն խօսքերով, նոյն ոճով, նոյն տենդենցով, որ կարդացողի զահլէն տարան։

Այլեւս վերջին հեռագրական լուրերը կարդալիս, երբ տեսնում ես Լօնդօն խօսքը, ինքնաբերաբար շարունակութիւնը կարդում ես. «Համայնքների պալատում սըր Էդւարդ Գրէյ սօցիալիստ Ջօնի, կամ Ջէյմսի հարցապնդմանը պատասխանեց» և այլն և այլն, ամէն օր՝ միևնոյնը։ Կամ Թաւրիզի, ու Թէհրանի հեռագրները շարունակ գրում են «Անջումանականները պարտութիւն կրեցին, Շահ Մահմէդ-Ալին զօրանի վերայ նորից երդւեց սահմանադրութեանը հաւատարիմ մնալ, Սիփեհդարը յայտնեց, թէ զէնքը վար չի դնիլ մինչև որ... և այլն և այլն։ Էլ չեմ գրում ամենօրեայ միանման հեռագրների համար. «Վլասովկայ գիւղում հրդէհը ոչնչացրեց երկու տուն. կամ Օդէսայում թէ Վարշաւում քաղաքապահի վերայ անյաջող մահափորձ կատարւեց։ Միջին Ասիայի... (հեռագիրն աղաւաղած է), գիւղում երկրաշարժի թոյլ ցնցումներ զգացւեցին ու հազար և մէկ այս տեսակ շահաւէտ ու անհրաժեշտ հեռագրների մասին։

Պարզ բան է ընթերցողն ամէն օր այս միևնոյնը կարդալով կձանձրանայ. դրա համար էլ մեր լրագրողներն հնարել են պօլեմիկան, այսինքն իրար միս ծամելը։ Ընթերցողներն էլ, պէտք է խոստովանել, մասամբ սիրում են պօլեմիկան, այսինքն ոչ թէ պօլեմիկան, այլ պօլեմիկայի մէջ նորանոր հայհոյանքները։ Կարդացողին չի հետաքրքրում ենթադրեալ սկզբունքը, կարդացողն ինքն իր սկզբունքն ունի։

Բայց և այնպէս շարունակ հետեւում է պօլեմիկային, թէ տեսնենք այսօր ում մայրն է լացացրած։

Եւ իրօք մեր լրագրողներն ինչե՞ր չեն անել պօլեմիկայ սարքելու համար։ Տեսէք Խաչատուրովի և Ամիրաջիբիի պօլեմիկան, քիչ մնաց ատրճանակ մէջտեղ գար և դեռ մինչև օրս էլ չի վերջացել։ Երկու թերթում էլ հակառակ բանակների զինակիրները դուրս են եկել՝ աւելի կատաղի, քան իրենց զօրավարներն ու նիզակ է, որ ճօճում են։

— Ա՜խ, էդ Խաչատուրովին պէտք է լաւ դնքսել, ծամում են իշխանի համփօշնները։

— Ապերախտնե՛ր, եթէ Խաչատուրովը չը լինէր, վրաց ազնուականների բանկը հիմայ պլուած էր եղեր. նա էր, որ հմուտ ձեռքով իր հաշւապահութեան ժամանակ, բանկի գործառնութիւնները հիմնաւոր անօրինեց և վրաց ազնւ. բանկը այսօր կարողանում է նպաստներ տալ, կամ օգնութեան հասնել վրաց կուլտուրական ընկերութիւններին։

— Խաչատուրովը խայտառակ մարդ է և քեօթակի արժանի, յոխորտում են իշխանի զինակիրները։

— Իշխան Ամիրաջիբին, Օրբելին-Մօրբելին սկանդալիստներ են, գրչով չեն կարող կռւել, բռունցքով ու զէնքով են մէջտեղ գալիս։

— Ա՜խ թէ Խաչատուրովը...

— Ա՜խ, թէ Ամիրաջիբին, Օրբելին մօրբելին...

Ձեզ եմ հարցնում, կարո՞ղ է ընթերցողը չհետեւել, թէ ե՞րբ պէտք է սրանք իրար գըլուխ ուտեն։

Աւելի մազալու է հայ լրագրների պօլեմիկան։

—Էն մ՛տող է, որ երկու թէ երեք տա-

րի առաջ ինձ պլագիատոր հռչակեցիր․
— Բա որ նրանից առաջ դու իմ բանագողութիւնը բանեցիր։
— Դու հիմայ էլ պլագիատոր ես։
— Ութ որ չը կայ, որ քո բանագողութիւնը բանեց։
— Անազնիւ։
— Անպատկառ։
— Անամօթ։
— Սրիկայ․
— Հաջի, մղդսի, տիրացու։
— Դրամաշորթ, գող։
— Վա՛յ, վա՛յ, լսեցէ՞ք, գողը ինքն է, խարդախ։
— Մենք հաշիւ ենք տալիս․ մենք երաշխաւորում ենք մեր կայքերով, դուք էլ հաշիւ տւէք։
— Մատնիչ, դաւաճան, քածւ։
— Խելակորո՛յս, տարէք օրհնատախտնը հօբաղդյա կաւինը։
— Թքել են ձեզ վերայ, ձեզանից երես են դարձրել բոլորը։
— Սուտ է, բոլորը չեն թքել ու երես դարձրել։
— Փողեր, աւազակներ․
— Փողերի մեծը դուք էք, աւազակների գլխաւորը դուք էք։

Ո՞վ չի զարհուրի այս մարգարիտները կարդալով։ Ես փողոցով շատ-շատ գործի գնալիս էլ, երբ տեսնում եմ ծեծկւող երեխաների, կանգնում, նայում եմ և միշտ էլ բարկանում եմ քաղաքապահի վերայ, որ փաղէփաղ գալիս, կռիւը վերջացնում է, պատւական ժամանցս ոչնչացնում։

Կամ դուք չէք հետաքրքրւում, ազգիս վերայ կռւող արդարներով։ Ինձ շատ դուր է գալիս, երբ այդ արդարները մի ճանճի վզզոց մահանայ արած, իրարից բաժանւում են, կրծքերն ուռեցրած, մէկը գնում է մէկ կողմ, միւսը միւս կողմ․ ազգիսս հակառակ ծայրերում կանգնած ծուղրուղու անում, թէ ես յաղթեցի և կամաց նուհանջելով, հակառակորդին հասկացնում, թէ շատ էլ չեմ վախենում քեզանից։

Ա՜խ, քաջ արդարներ։

ՄԻԼԻՕՆԵՐ

## ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Շաբաթ յուլիսի 18-ին, հայկական Սեկցիայի սիրողները Զուբալովի անւան ժողովրդական տան ներկայացրին առաջին «Թանում» և երկրորդ «Օսկան Պետրովիչը էն կինքում»։

Թատրոնը ոչ թէ ծայրէ ի ծայր, այլ գլխէ ի գլուխ լիքն էր, որ անադին գրաւում գոչումով, ծափահարելով ու ոտքերով թրխկթրխկացնելով յիշեցնում էր բեմինեօրին, թէ ժամանակ է վարագոյրը բարձրացնելու։

Վարագոյրը բարձրացաւ։

Թէպէտ պ. Փիրումեանը Յակոբի դերում խաղում էր գեղեցիկ և յաջող, դրա հակառակ տիկ. Տէր-Գրիգորեանը ալեկ և անյաջող, իսկ եթէ միւս դերակատարներն էլ դերերը սովորէին, գուցէ պիեսայի անունը դարձնել Թանում՝ Թոփ, դժբաղդաբար բացի պ. Փիրումեանից միւսները «Թանումին» դարձրին Բեթեան։

Եթէ կրճատած խօսենք, տիկ. Վարդուհու և Գարունիա Յագարեկեա «Թանումայի» հետ համեմատած, միևնոյն է թէ համեմատենք մի մարուր ու գեղեցիկ զարդարւած դահլիճ, կեղտոտ խոհանոցի հետ։

Գ. Տէր-Գրիգորեանը Օսկան Պետրովիչի դերում հոգով և մարմնով մեռած էր, թէպէտ նրան մեծ առաւելութիւն տալով, որ միմիայն մարմինն է մեռած, իսկ հոգին կենդանի է։

Գարունի աւելորդաբանութիւնները ոչ թէ չէին գեղեցկացնում յարգելի Սունդուկեանի գեղեցիկ պիեսան, այլ չափից դուրս տգեղացնում։

Օրինակ, իր ծանօթ մեռածներին, որոնք գժողքի կրակն են բարձրանում ու իրենց կենդանի ժամանակ արած չարագործութիւնները տալիս, այդ գէշերւայ Օսկան Պետրովիչը, ոչ թէ երկիւղով էր մօտենում ու ափշած հարց ու փորձ անում, այլ ուղղակի առաջ էր վազում, կրծքից խաչած ձեռքերից քաշում, բարեւում էր. ուրեմն պարոն Տէր-Գրիգորեանի կարծիքով կարելի է Վարանցովի, Դօգօլի և Պուշկինի արձանների առաջ կանգնել ու հետները մայլահաթ անել։

Անարւեստները տեսում էին կարճ և սրախ չնորհիւ մեր թատրոնասէր երիտասարդութեան, որոնք անարւեստները ձանձրալի չը դարձնելու համար, տաք ու դմփոցով էին գրաւած, բառ հայկական սովորութեան։

Օսխար

## ԱՆՇՆՈՐՔ ԱՄՈՒՍԻՆԸ

Օ՜, Արուսեակ, բարև, բարև։ Ո՜րքան ժամանակ է չենք տեսնւել, ինչպէս ես, բա՛, այդ ինչ է, սպասի՛ր ես։

— Մի՞թէ չես լսել մինչև այժմ. ամուսինս երկաթուղու գնացքի տակն ընկաւ և մեռաւ։

## ՖԵԼԻԵՏՕՆ

### ՆՈՐ ՓՈԽԱՆՈՐԴ ՎԱՐԴԱՊԵՏԸ

Պատմւածք Ջէրօմ Կ. Ջէրօմի

Այս բանը տեղի ունեցաւ Եօրկշիրի (Անգլիայում) փոքրաթիւ ծխական համայնքներից մէկում։ Այնտեղի պառաւիկ բնակիչների կեանքը ընթանում էր խաղաղ և անվրդով։ Բայց ահա մի գեղեցիկ օր այնտեղ մի նոր փոխանորդ եկաւ և արդէն այսքանն էլ բաւական էր, բոլոր ծխականներին յուզելու համար։

Փոխանորդը երիտասարդ և դուրեկան մարդ էր և քանի որ դրա հետ միասին ունէր և անձնական մեծ կարողութիւն, ապա հասկանալի է, որ նա շատ հրապուրիչ դէմք էր ներկայացնում, ամեն մի չամուսնացած կնոջ համար։

Բայց սովորութեան հակառակ, կնոջ գեղեցկութիւնը և այլ հրաշալիքները նրա վրա ոչ մի ազդեցութիւն չէին անում։ Նա այդ բանի համար շատ լուրջ և նշանաւոր երիտասարդ էր։ Մի անգամ սիրոյ շուրջը պատահական խօսակցութեան ժամանակ նա յայտնեց, որ ինքը կնոջ գեղեցկութեան և արտաքին հմայքին մի առանձին նշանակութիւն չէ տալիս։ Այն հարցին, թէ ո՞րն է հապա կնոջ մէջ ամենագնահատելի բանը նրա համար՝ նա պատասխանեց— ամենագլխաւորը բարութիւնը, բարեգթութիւնը և մարդասիրութիւնը դէպի աղքատները։

Այս բանը տարակուսանքի մէջ գցեց ամամնութեան ծարաւի բոլոր կանանց։ Նրանք տեսան, որ սիրոյ ճանապարհ(ին) ընթանել՝ գեղարւեստական նորոյթներ(ի) ու գեղեցիկ փրայներով իրար հետ խիստ կերպով մրցելու մէջ։ «Աղքատը» այժմ նրանց համար մի գլխաւոր կօզըր (козырь) դարձաւ։

Բայց այստեղ ահա մի լուրջ դժւարութիւն ծագեց։ Բոլոր ծխականների մէջ միայն մի հատիկ աղքատ կար, մի հիւծւած ծերունի մուրացկան, որ ապրում էր եկեղեցու յետևը, մի կիսաւեր խրճիթի մէջ և ահա տասնուհինգ պճնազարդ և գեղատեսիլ կանայք (տասնումէկ երիտասարդ օրիորդներ, երեք պառաւ օրիորդներ և մէկ որբևայրի) յանկարծ ցանկացան բարեխաւել նրան։

Պառաւ օրիորդներից մէկը, միսս Սիմմօնդսը առաջինը եկաւ նրա մօտ և սկսեց կերակրել նրան բիֆշտէկներով օրական երկու անգամ։ Յետոյ էլ որբևայրին սկսեց պօրտվէյն և տաքէնէր բերել նրա համար։ Հէնց նոյն շաբթին երեւացին միւսած մրցակիցները և սկսեցին գլուխ պատառած կերակրել նրան հաւի ճուտերով և քաղցրաւենիներով։

Ծերունին չը կարողացաւ հասկանալ այս բանը։ Նա սովորել էր ժամանակ առ ժամանակ ստանալ մի փոքրիկ տոպրակով ածուխ, իսկ մեղքերի մասին երկար խրատներն էլ հետը և երբեմն էլ շիշով թէյ՝ կէսը խմած։ Նախախնամութեան այս անսպասելի առատութիւնը նրան զարմացրեց։ Բայց և այնպէս նա բան չէր ասում և աշխատում էր օգտւել առատութիւնից, որքան իւր ույժը պատում էր։ Մի ամիս անցած, նա այնպէս գիրացաւ, որ դժւարութեամբ էր ներս մտնում սեփական դռնով։

Կանանց մէջ նախանձն օրէցօր ուժեղա-

Նիսեան.—Ախպէր ինչ էք գանգատ տանում, տեղ էք գտե՞լ մէկմէկու միս ծամելու, հայր Թէմուրազեան, սանիք նախագահն ու դմբլօ, դու խօ դոշաղ ես, ինչ գրում ես, գրի պրծի, էլի: Նոր խօ չենք գալու մեր ունեցած պարգևները խլելու. ժողովի էիք կանչել, ես էլ հէնց գիտացի գանձարանի տոկոսներ էք բաժանում վազ-վազ կօնկա նստեցի եկայ:

Իզիթեան Սարգիս քհ.—Ես միանգամայն համաձայն եմ Տէր-Համազասպի խօսքերին, սակայն և կըչկչալի մի լաւ ծիծաղեց: Հերթը հասաւ անհոգացաւոր Տէր-Գէորգեան քահանային.—Հայր նախագահ, ասաց նա, էսքան տարում հազիւ հազ մի խաչ ստացայ, էն էլ ուզում են խլել. էս ինչ իշխանութիւն է, բաս սրանց մէջ կարգ ու կանոն չկա՞յ:» Ամենից վերջը խօսեց Ճուղուրեան քահանան.—Հարք պատուականք, աւետարանն ասում է. «Արթուն կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու գայցէ՝ տանուտէր, միջօրէի, թէ»... հնա այսպէս էլ, դուք, պարգևաւոր եղբայրներ, առաջուց պէտք է մտածէիք թէ՝ էս որ առօք-փառօք կախ ենք անում ու մէյդան դուրս գալիս, էս մեր ո՞ր արժանիքի համար է: Այսօր ձեզանից հաշիւ են պահանջում, պարտաւոր էք ճիշտ հաշիւ տալու, թէ չէ իմ գրիչը պատրաստ է ամեն մի գեղծում երևան հանելու: Իսկ դուք, ո՛չ պարգևաւոր եղբայրներ, ես այստեղ մի ուրիշ արձանագրութիւն եմ կազմում, որ սրանց պարգև կրելը բաւական համարեն, այժմ յետ առնեն և մեզ տան: Ով համաձայն է այս գրութեանը, թող իմ կողմը կանգնի: Շատ քչերն անցան Ճուղուրեանի կողմը, որովհետև քաղաքի քահանաների երկու երրորդից աւելին ամեն բանով պարգևատրուած են: Նրան միանգամայն համամիտ եղաւ նրա ընկեր Տէր-Սահակ Սահակեան քահանան: Այնուհետև կազմուեցաւ հետևեալ ցուցակը՝ վասն պարգևների, (որի պատճէն ինձ տուեց Վանքի տիրացու Նիկօլը) այն է՝

Ներսէս ա. քհ. Ղամազեանը վարձատրուել է՝ իր չափազանց ընկեր-միաբաններ սիրելու, անասելի քարոզչութեան, քաղցրախօսութեան պատճառով՝ միջնորդութեամբ բէֆասէր. Հմայակ վարդապետի:

Յարութ. քհ. Շախեան.—իր չափից դուրս մեծ փոր ունենալու պատճառով՝ իր արքեպիսկոպոս եղբօր միջնորդութեամբ:

Տէր Արսէն—իր փիլիսոփայական մտքերի ու կազմած օրինակելի դասագրքերի համար, քնքոյշ հոգևորականուհիների միջնորդութեամբ:

Սաղօյեան Գր. քհ. Զբօսասիրութեան պատճառով, հանգուցեալ յայտնի բարերար տիկ. Նաղիբեանի միջնորդութեամբ:

Յովհ. քհ. Իսրաչեան—վասն բարեկամութեան Տէր-Գիւտ ա. ք.-ի, Կորիւն վարդապետի բարեխօսութեամբ:

Տէր-Սարգիս Շիօեան—վասն դէյլիազայութեան Տէր-Տեղակալի և միջնորդութեամբ հանգուցեալ Տէրտէրեան աւագ երեցու:

Հայր Շահնազարեան—Թիֆլիզ տեղափոխւելու պատճառով՝ հանգուցեալ անփոխարինելի երեցփոխի խնդրանօք:

Տէր Վարդիկ—վասն կոխտայութեան և անփոխարինելի կրօնուսուցչութեան՝ իշխանութեան թոյլտուութեամբ:

Եւ այլն, և այլն...

Արձանագրութիւնը ստորագրելուց յետոյ՝ ժողովականները ցրուեցին, մեմինց հետ խօսելով—Աստուած վկայ, համա ինչ ճշգրիտ ցուցակ կազմուեցաւ, ա՛յ ձեզ անփոխարինելի Ցուցակ Ծառայութեան:

Հիւլէ

## ԴԷՍԻՑ-ԴԷՆԻՑ

### Դատարանում

Պաշտպանը.—Վկայ, ասացէք, շիշը սեղանի տա՞կ էր դրուած:

Վկայ.—Իսկ և իսկ սեղանի տակ:

Պրօկուրօր.—Խնդրեմ պ. վկայ, լաւ միտաբերեցէք, գուցէ շիշը սեղանի վրա՞յ էր դրուած:

Վկայ.—Իսկ և իսկ սեղանի վրայ:

Նախագահ.—Այս ինչ հակասութիւն է, վկայ. ո՞րտեղ էր դրուած շիշը. յիշեցէք, որ սուտ վկայութեան համար դուք մեծ պատասխանատուութեան կենթարկուէք:

Վկայ.—Հա՛... շշի մասին է խօսքը.

—Ոչ մի տեղ էլ չէր դրուած:

### ՕԴԵՍՍԱՅՈՒՄ

—

Ենտրը.—Ձեզ մօտ շատ տխուր է:

Զիչերօնէ (ուղեցոյցը).—Այո՛... ուզու՞մ էք գնանք խմբագիրներին ծեծենք:

—

Ենտր.—Ա՜հ, յիշեցի, որ մանրավաճառը մոռացաւ ստանալ մեզանից սիգարների և լուցկիների փողը: Ի՞նչ անախորժ բան:

Զիչերօնէ.—Ոչ թէ մոռացաւ, այլ ոստիկանի վախեցաւ:

Ենտրը.—Ինչո՞ւ:

Զիչերօնէ.—Որովհետև նա ժիդէ (հրէայ):

### Փայլուն միջոց

Ռուս դիպլօմատը.—Ա՛յ, մինչև այժմ չենք կարողանում վճռել, թէ մեր միեխտութիւնը անգլիական շահերը պիտի պաշտպանէ, թէ՞ գերմանական:

Խօսակիցը.—Բայց աւելի լաւ է, դուք պաշտպանէք ռուսական շահերը:

Դիպլօմատը (հիացած).—Բայց չէ՞ որ, գիտէք... Դա իդէա է:

«Смѣхъ» գրքից

### Մուրացկան

Գարնանը, ծիծաղոտ և խայտաբղէտ ամբոխի մէջ ես ընդհարուեցայ մի մուրացկանի հետ: Բախտը շատ դաժան կերպով էր նրա հետ կատակ արել—նրա ձեռքերը, մինչև արմունկները կտրուած էին...

Նա գլխով արաւ ինձ և ասաց.—

—Ողորմութիւն արէք անթև մարդուս, էլ ես մարդ սպանել չեմ կարող:

### Առօրեայ թանաստեղծները

—Դուք ոտանաւորներ էք գրում. ասացէք, ձեր ոտանաւորների ամենասիրած չափը ո՞րն է:

—Տպագրական թերթը:

Ասեղ Մախաթովիչ

Տրամուայի կօնդուկտորը մօտենում է նստածներից մէկին և յայտնում.

—Պարոն, այստեղ ծխելն արգելուած է.

Տօ, լաւ մարդ, ո՞ւմ ինչ եմ վնասում, հարցնում է ծխողը:

—Ինչ անեմ, եղբայր, այդպէս է կարգադրուած «ընկերութեան» կողմից

—Էդպէս է, էդպէս: Այստեղ՝ գրպանից պօրտման հանելը արգելուած չէ, իսկ ծխելը, յանկարծ, արգելուած է:

—Առանց շատախօսութեան. խնդրեմ չը ծխէք-վերջապէս հրամայում է կօնդուկտօրը:

Բաս, որ էդպէս է, խնդրեմ կանգնեցնէք վագոնը, ցած գամ ծխեմ, ծխելուց յետոյ նորից կը նստեմ, պատասխանում է ծխողը:

Յ. Ա.

—

—Ես քեզ սիրում եմ և կուզէի հետդ ամուսնանալ:

—Բայց տիկին, այդ չեմ կարող, դուք արդէն որդիք ունիք. եթէ նոյն իսկ սիրէի, էլի չէի կարող, երեք որդի բաւական դժւար է պահել:

Ես որդոցս բերում եմ, որպէս պրիդան. (օժիտ) դրա համար պէտք է նոյն իսկ ուրախանաս:



## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Ալեքսանդրապօլ. Լ. Խա.—Ձեր ոտանաւորը չի տպւիլ, բայց յետ էլ չենք ուղարկում, որովհետև վախենում ենք, թէ կորցնէք, կամ ուրիշները գողանան կարդան:

Ինչե՞ր չի պատահում «Այս ցաւալի աշխարհում»

Բագու.—Խաչատուր Մելիք-Բարխուդարեանց: Ուղարկեցէք ձեր գրածները «լօխ» միայն տասնոց մարկաների մէջ ուղարկիլ:

## «ՄՇԱԿԻ» ԸՆԹԵՐՑՈՂԻՆ
## ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

«Մշակի» №№ 154 և 157-ի մէջ Առաջին և Երկրորդ ընթերցողները խիստ են վրդովւել, որ համարձակւել ենք մի կարիկատուր տպել «Խաթաբալա»ի № 28-ում, որտեղ մատնանշել ենք, թէ ինչպէս մեր յարգելիները՝ Ա. Քալանթար, Ա. Աթանասեան, Էյրանեան և այլն, գնում են Ղարաքիլիսա դասախօսութիւններ անելու, իսկ ատենձնալէս մածնի համար շատ են աշխատում։

Եթէ ուրիշ անգամ լինէր, գուցէ այդ Առաջին և Երկրորդ ընթերցողները շատ ապաչէին որ իրենց կարիկատուրն էլ դնէինք, գնահատէին կասէնք, նոյն իսկ իրենք յօդուածներ կբերէին, թմբուկ կզարնէին—թէ դա խիստ տեղին էր։ Բայց այս անգամ Առաջին և Երկրորդ ընթերցողները, որոնց ականջներից ենք ճանաչում, այլ կերպ են բացատրում կարիկատուրը և մեր չորս տարուայ գործնէութիւնը պօռնօգրաֆիա և պասկւիլ հռչակում։

(Պասկւիլիստները և պօռնօգրաֆները իրենց արշինով են ուրիշներին չափում.

Միմոսներն էլ նոյն յատկութիւնը ունին. բնական գիտութիւններն էլ այդ են ասում։

Այդպէս էլ սպասում էր այն անձերի կողմից, որոնք քաղաքացիական քաջութիւն չունին իսկական անուններով դուրս գալու և ապա խօսելու։ Իսկ այդ մտավախների, այդ «առաջին» և «երկրորդ ընթերցողների» անունը ինչ է եղել՝ վարկաբեկել մեզ, ոչ թէ նրա համար, որ «Խաթաբալան» այսպէս կամ այնպէս է եղել, այլ այն պատճառով, որովհետև համարձակութիւն ենք ունեցել մի երկրորդ թերթ էլ տանել, Կօջօրի բարձունքից նրանցից իրաւունք չը վերցնելով։

Պատասխանել այդ «ընթերցողներին»?՝ կարելի էր, եթէ պարոնները? իրենց իսկ անուններով դուրս գային. այդ դէպքում հասարակութիւնը կտեսնէր, թէ ով են «կուլտուրապաշտպան» առաջին և երկրորդ ընթերցողները, բայց քանի որ նրանք չը կան, ծածկւում են թափանցիկ վահանների յետև, մենք միայն ցաւում ենք «Մշակի» որպէս քաղաքական? գրական? և հասարակական? թերթի խմբագրութեան վերայ, որ տեղ է տալիս այդ օրինակ ցինիկ, լակէյական նամակներին, նամակներին այն անձնաւորութիւնների, որոնք մեզանից դադրելու պատճառներ ունին և որանց կաշին իրենք իսկ դարախանումն են ճանաչում։ Մենք ցաւում ենք «Մշակի» համար այն պատճառով, որ թերթը դարձնում են... մի երկու մարդկանց համար, որոնք «հասարակութեան, կուլտուրայի, «աշխատաւոր հայ մասսայի,» հէնց «Մշակի» և պ. Քալանթարի այնչափ բարեկամներն են, որչափ...

Մենք վերևն էլ ասացինք, որ ականջներից ճանաչում ենք «երկրորդ ընթերցողին» և «ընթերցողին» որոնք դադւած կաշի ունին—թէ մեր այս ենթադրութեան մէջ սխալ ենք, թող հրապարակ գան իսկական անուններով, այն ժամանակ այլ լեզւով կը խօսենք հետները։


### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի ու Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ

ԼՈՒՍԱԲԵՐ

Հայերէնի դասագիրք
Լոյս տեսան

Ա. տարի, երրորդ տիպ. 30 կ.
Բ. տարի, երկրորդ տիպ. բարեփոխ. 45 կ.

Երկուսն էլ ընդունւած կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից, իբրև դասագիրք պետական դպրոցների համար։

Տպագրւում են.
Գ. տարի . . . . . 60 կոպ.
Դ. տարի . . . . . 75 կոպ.

Գլխաւոր պահեստներն են հետևեալ գրախանութները. Թիֆլիսում «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» և Կենտրոնական, Բաքւում՝ Сотрудникъ, Երևանում՝ Յովհաննիսեանի և Շուշում Բ. Տէր-Սահակեանի։

ПЕРВАЯ
художественная хромо-литографія
С. БЫХОВА
Тифлисъ, Головин. просп. около цирка

Печатаются всевозможныя литографскія работы въ разныхъ стиляхъ.
Также всевозможные ярлыки спеціально для водочныхъ и винныхъ складовъ и т. п.
ПО САМЫМЪ УМѢРЕННЫМЪ ЦѢНАМЪ
Работы исполняются лучшими европейскими мастерами

Լոյս տեսաւ
Ռ. Խան-Ազատ եւ Գ. Վարդանեան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

27 նկարներով և մի մեծ գունաւոր քարտէզով։

Դասընթացք ծխ. դպրոցների IV բաժանմունքի և ժողովրդական ընթերցանութեան համար։

Գինն է 75 կոպ.

Գլխաւոր պահեստը «Գուտտենմբերգ» գրավաճառանոցում. կարելի է դիմել և հեղինակներին՝—Тифлисъ, Сурпъ-Нишанское училище.




ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

Գրական, քաղաքական, հասարակական եւ առևտրա-արդիւնաբերական
ՕՐԱԹԵՐԹԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Առաջնորդող յօդւածներ, Ներքին տեսութիւն, գաւառական կեանք, թղթակցութիւններ, քրօնիկ, արտաքին տեսութիւն, առևտրա-արդիւնաբերական բաժին (բօրսա և այլն). աշխատաւորական կեանք (աշխատանքի բօրսա). մամուլ, թերթօն (գրական, քաղաքական, իրաւաբանական, մանկավարժական և այլն). Թատրոն և գեղարւեստ, ժառենախօսութիւն, դատաստանական, նամակ խմբագրութեան, յայտարարութիւններ և տեղեկատու։

ՄԵՓԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Օրաթերթը հրատարակւում է յուլիսի 5-ից (նոր. տարեայ)

Մինչև սեպտեմբերի սկզբները հրատարակւելու է միայն երկու շաբթի օրերը, այնուհետև ամեն օր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ յուլիսի 5-ից մինչև տարւայ վերջը 4 րուբլի, 3 ամիսը 2 ր. 50 կ. ամիսը 70 կ.։ Արտասահմանի համար մինչև տարւայ վերջը 6 րուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція газеты «Сурандакъ»
Խմբագիր-հրատ. Աստ. Սրիցեան.
Հրատարակիչ՝ Գէորգ Չիլինգարեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԵՆ ԼԵԶՒՈՎ ԵՒ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

## ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆԸ

(Фото-Цинкографія)

ՏԵՂԱՓՈԽՈՒԵԼ է Պուշկինսկի փողոց, Պուշկինսկի Պասաժ.



**Мамед-Али** шахъ

НАРОДНОЕ ДВИЖЕНІЕ

ВЪ КРАѢ ЛЬВА И СОЛНЦА

*Цѣна 1 рубль*

СКЛАДЫ ИЗДАНІЯ: *Тифлисъ*

КН. ТОР. ГУТТЕМБЕРГ

*Александрополь* ТИПОГР.

„ШИРАКЪ"

АТРПЕТЪ

МАГАЗИНЪ

## Композиція

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



Громадная экономія

шведскаго компо-
зиціон. бѣля.

→Носится не менѣе
двухъ лѣтъ←

Постоянный боль-
шой выборъ свѣжаго
товара

Воротниковъ, мани-
шекъ и манжетъ.

Единственный
представитель для Ти-
флиса и ихъ окрест-
ностей

по фабричнымъ цѣнамъ

передѣлка въ любой фасонъ безплатно

М. А. КАЛТАГЯНЦА



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

## „ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւը Աշխարհում

ԱՆԳԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕ-ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, չքնաղ ֆասոնների և ամենալաւ գործածուող նիւթերից



ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

## ՊՐՕՎՕԴՆԻԿ

1888

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## ՄԻՒՆԽ ԵՒ ՎԷՅՍ

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՄ


Խմբագիր-Հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ.

Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.



1)ՄԱՄԷԴ ԱԼԻ ՇԱՀ (գահազուրկ) 2)ՆՈՐ ԸՆՏՐԻ ԱՀՄԷԴ ՇԱՀ 3)ԶԻԼԼԻ ԷՍ ՍՈՒԼԹԱՆԷ (Նախկին շահի հօրեղբայրը) 4)Ս Ա Ր Դ Ա Ր Ա Ս Ա Դ 5)Ս Ի Պ Ե Հ Դ Ա Ր



Թղթախաղը լայն ծաւալ է ստացել, խաղում են՝ն մեծերը և որդիք, աշակերտներն ու վարժապետ-ները, հարուստն ու աղքատը։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄՈՒՐՀԱԿՆԵՐ ՋԵՂՋՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԻՍՏԸ



—Պարոններ ժողովարանում լոտոն սկսւեց. աւելի լաւ է գործը յետաձգենք, գնանք այնտեղ գուցէ մի բան տանենք. բաղդերս նորից փորձենք։